

ԲԱՇՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա

Տարեկ. 10 ֆր.


Վեցամս. 5 "

Արտասահման

Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6 "

ԿԱՆԻՍԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չին տրուիր:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՅԱԲԱՐԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Դ ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 22 ՇԱԲԱՏ 1900

ԹԻԻ 171

ՔՍԱՆ ՏԱՐԻՆԵՐ

Ոչինչ այնքան զաւեշտական պիտի ըլլար, որքան Պուլկարահայուն մինչեւ անդամ կրթական պղնձադարին մէկ բանը նկատելաւ փերջին քսան տարիներու ընթացքը, որ այնքան ազմուկով բոլորեցաւ մեր կարծեօք, առանց ամենափոքրիկ բարեշրջում մը յառաջ բերելու մեր կրթական վիճակին մէջ:

Վարժարաններու շուրջ և կամ վարժարաններու մէջ կաշի քաշքշելու համար սքոթացող վարժապետական կէս-դաստիարակուած ջոկատը մի քանի շղարկի ֆապիշներով թոյլ պաշտպանութիւններ կը վայելեն թէ այն բուխարիտ խմբագիրներէն, որոնք քննադատութեան տարափին առին՝ այդ ջոկատին երեսը քիչուկ մը չորցնելու բարեացակամութեամբ, անձնուոյն մատուցանելու փութկոտութիւնը ցոյց կուտան, և թէ այն գրող վարժապետներէն, որոնք չըսենք էսնափական ղալթիքի թեմա, այլ պարզապէս անհարկի ինքներեւումով մը վերջին կրթական քսանամեկին բողբատական անգոյ գերազանցութիւնը կը տօնեն և քննադատութեան թափը կտրել կը ջանան միամտօրէն:

Մէկգի առնելով այս թոյլ ջատագովականները, բարեբաղդաբար կը տեսնենք, որ հանրային ըզգացումը և առողջ միտքը կ'ըզան վէրքին ծանրութիւնը և թէ և առ այժմ պղատոնական, բայց վերջապէս ինքնամիտքու ելու փրկարար երևոյթին տակ՝ գոհունակութեան արտայայտիչ նշաններով կը ծափեն եղած քննադատութիւնները, որչափ ալ խիստ ըլլան անոնք:

Այդ ինքէն դէպի պատճառը դնալու անմոլոր ճամբով մը այսօր, իրողութիւնը շատ պերճալսօրէն ցոյց կուտայ թէ Պուլկարահայոց՝ փերջին քառորդ դարուն մէջ ըրած նիւթական զոհողու-

թիւնը ոչ միայն համապատասխան արդիւնք տրւած չէ, այլ և աստիճան մըն ալ յուռիշքած է զայն, քանի որ նոյն այդ զոհողութիւնը հին չարշիական մարդիկներու տեղ, որոնք համակերպելով ս և է պարկեշտաշխատութեան գիտէին գոնէ իրենց ապրուստը ճարելու դաղանիքը, ծառայած է միայն և յաւէտ հրապարակը ողողելու իմաստակէն աստիճան մըն ալ վար, մտամոլոր ու անճարակ տորով մը:

Քսան տարիէ աւելի ահագին շրջանի մը մէջ, ուր Պուլկարիոյ աղատագրմանը շնորհիւ Հայ ազգաբնակչութիւնը վայելեց թոյլատու օրէնքի մը բոլոր առաւելութիւնները, կրնանք ըսել թէ մեր վարժարաններու սեմէն ներս ու դուրս մեքիկի պէս մտան ու ելան ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ աւելի ուսանողներ, ամենքն ալ հրապարակուած ճոխ ծրագրէ մը և անոր հեղինակ-վարժապետներուն ճոռով ստիեալութեանէն: Քսան տարի վերջ, այսօր, իցիւ թէ ցոյց տրւուէր մեզ այդ երեք հազարին մէջէն ԵՐԵՎԱՆԻ հատ երիտասարդներ, որ քիչ չատ զարգացած միտք ու առողջ կրթութիւն մը ներկայացնէին զուտ ազգային գաստիարակութեան շնորհիւ:

Լսեցէք. մեր վարժարանները՝ ամենքն ալ իրենց ժամանակին, դուրս ելլելով նախակրթարանի համեստ շրջանակներէն, այդ երեք հազարներուն ամեն մէկին հանդիսաւորապէս խոստացած են խել մը հմայիչ ութիւններու հետ, ուսուցանել նաև անպատշաճ մայրենի լեզուն, տիրող տարրին լեզուն և եւրոպական լեզու մը: Չը գիտեմ ո՞վ պիտի յանդգնի այսօր ցուցնել մեզի այդ երեք հազարէն միայն երեք երիտասարդներ, որ մեր վարժարաններուն շնորհիւ՝ ձգէ՛ ուրիշ գիտութիւնները, ուսած ըլլային գոնէ կոկիկ ֆրանսերէն մը, գոնէ պուլկար լեզուն, ի՞նչ կըսեմ, գոնէ հայերէն մը . . . :

Աւ քանի մտած ենք, այնքան աւելի զայրու թով կը

գամուինք ուս դադարին վրայ ալ թէ՛ այս ահաւ-
լի ամլութեան պատճառը նիւթական զոհողութեան
պակասութիւնը եղած չէ՛ երբեք, վասն զի կը
տեսնենք, որ Պուլկայահայը պէտք եղածին պէս
կը ծախսէ իր վարժարաններուն համար և կրնայ
այդ կողմանէ մինչեւ իսկ մրցումի մտնել ու և է
լուսամիտ ժողովրդեան հետ: Նկատողութեան առ-
նելով նոյն իսկ բաղմածախ Թրանսայի ու Պուլ-
կարահայ ուսանողներու թիւը, կը տեսնենք որ
նախնական կրթութեան համար մէջ մի ուսանո-
ղի վրայ եղած ծախսը Թրանսայի մէջ շատ ան-
նշան առաւելութիւն մը ցոյց կուտայ, այն ալ
յաւէտ վերագրելի կեանքի թանկութեան և տե-
ղական ուրիշ անհրաժեշտ պայմաններու:

Չէ՛, չը մոլորենք և չը մոլորեցնենք: Ամլու-
թեան գաղտնիքը շատ մը ուրիշ պատճառներու
հետ, որոց մանրամասնութեան մէջ կը մտնենք
ուրիշ առթով, մեր վարժապետներուն (*) ազէտ
«ես»ին մէջ ալ փնտռելու է. իրենց պաշտօնին
վեհութեանը համեմատ իրենց աշխատութեանը
մէջ հոգի չը դնելուն մէջ ալ փնտռելու է.
հիմնապէս անծանօթ ու և է օտար լեզուի, լրջ-
րէն մանկավարժական որոշ մեթոտի մը չը հե-
տեւելնուն մէջ ալ փնտռելու է: Կոյլ, անբարո-
յական եւ հեշտամոլ կեանքի մը բոլոր դաւն
հետեւանքներուն մէջ ալ փնտռելու է. . . ալքո-
լի տախաններուն մէջ գիշերն ի բուն լողալէ յե-
տոյ, առտուն գարշիլի շունչով դասարանները
մտնելուն մէջ ալ փնտռելու է. . .

Եւ Թիսուսի մտրակը ձեռք առած, վանելու
զանոնք տաճարներէն զոր կը սրբապղծեն տա-
կաւին անպատիժ կերպով:

Ահա քսան տարիներու հաշիւը եւ ահա
պարտքերու վսեմը: Թէ որքան է այդ պարտքը.
մենք կանգրադառնանք ուրիշ առթով:

ԾԱՆՕԹ

(*) Բացառութիւնք յարգելի են:

Ծ.

ԱԶԳ

Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ հասարակութեան
թէ յանձնակատարի կանոնադր երթեկէ մը հաստատած
ենք ընդ մէջ Ղաւնա, Զուլա, Բլէվնա, Սոփիա և Ռուս-
ճուրի ու պիտի գոհացնենք մեր Պատ յաճախորդները
ամեն կերպով: Կեդրոնատեղին է Տ. Ա. Զարպանէլեան
ըդատունը Ղարնա.

ՆՇԱՆ ՍԱՐԵՔԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

ԶԱՆՇԵԱՆՅԻ ՄԱՀՐ

Երէկ իրիկուն, Ս. Պատրիարքին ուղղուած
հեռագիր մը գուժեց ուսահայ ծանօթ բարե-
րար Պ. Գրիգոր Զանչեանցի մահը, որ նախըն-
թաց օր տեղի ունեցեր է Բեդերսպուրիի մէջ:
Այս մահը հաւասար սուգ մը պիտի պատճառէ ու-
շափուս ու ուսահայ շրջանակներու, այնչափ ալ
մեր, արեւմտեան Հայերուս մէջ, քանի որ անով
կանհետանայ մէկը այն բարերարի տիպարներէն
որոնք Լօւտան առանց տուած ըլլալին շորս
հովերուն հոշակելու: Զանչեանց այս տիպարնե-
րուն ամենէն աչքառանքէն մէկն էր, ու տարի-
ներով իր անունը չէր բաժնուած նմանօրինակ
բարգործական գործերէ, որոնցմէ շատեր ալ ա-
ռանց իր անունին կը յայտնուէին:

— Ս. Հայրապետը նամակ մը գրելով Ս.
Պատրիարք Հօր, ուզեր է գիտնալ թէ այս տա-
րի որո՞նք պիտի զուլին Գէորգեան ձեմարա-
նին աշակերտելու: Ինչպէս յայտնի է, ամէն
տարի, Թիւրքիայի մէկ քանի ուսանող կընդու-
նուին ձեմարանը:

— Գարակէօմբուլի ազգայինները հանրա-
թութեամբ մը դիմած են Պատրիարքարան,
խնդրելով որ մինչեւ Ս. Յովհան Ոսկեբերան ե-
կեղեցւոյն շինութեան աւարտումը, Զարխարան
Ս. Աստուածածնայ պատկերը գանձարանին մէջ
մնայ եւ ուրիշ տեղ չփոխադրուի:

— Թիֆլիսի օսմ. հիւպատոսարանը ուշադրու-
թեան առնելով որ Ռուսիա գացող օսմ. հպատակ
ներու մէջ կրնան գտնուիլ այնպիսիներ, որոնք
իրենց ծննդավայրին մէջ ընտանիքի եւ զաւակ-
ներու տէր ըլլալով Ռուսիոյ մէջ վերստին կա-

մասնաճան, ուսումնական հոգեւոր բարձրագոյն իշխանութեան զեկուցում մը ըրեր է որ միջոց մը խորհուրդ ազգ. անպատեհութեանց առաջը առնելու համար: Ս. Հայրապետը հիւպատոսարանին դրաւոր բացատրութեամբ մը յայտնել է թէ նմանօրինակ ամուսնական առիթներու մէջ հոգեւոր իշխանութեան կողմէ ի՞նչ տեսակ ձեւակերպութիւններ տեղի կունենան, աւելցնելով որ այս մասին աւելի սեշտորութիւն ըլլալու համար հարկ եղած միջոցները ձեռք պիտի առնուին: Ս. Հայրապետը այս խնդիրը մասնաւոր դրութեամբ մը զեկուցել է նաեւ Ս. Պատրիարքին:

Փ. Պ. ՏՆՂԵԱՆԻՆ

28 սնտուկը և տիկնանց մասնախումբի խնդիրը պարտկոշներուն կողքէ նամակառւոյ մը կար ձեղի ուղղուած. և կը յանձնարարէ որ ծանօթ կամ անծանօթ գաշնակցականներուն գրածին կարեւորութիւն չի տար:

Եթէ դուք ալ կոկոջներուն խմակէն չէք պատկանիր հարցուցէք առանց որ 28 սնտուկը գողցողներուն կարեւորութիւն չի տանք, տիկնանց մասնախումբին տօգիմաններուն ծանօթ կամ անծանօթ գաշնակցականներուն կարեւորութիւն չի տանք. հապա որոս կարեւորութիւն տանք. — այս ամեն զեղծումները պարտկոշներուն...

Ծանօթ գաշնակցականը

«Արեւելքի մէջ հետեւեալը կը կարգանք.

Այս առտուան ստորհադակը կը ծանուցանէ թէ Ֆիլիպէի ազգ. վարժարաններու տնօրէնը նախագատատեանի վշիւով 100 ֆրանք տուգանքի և մէջ ամիս բանտարկութեան դատապարտուել է, ինը տարեկան աշակերտ մը գաւաղանով ծեծած ըլլալուն համար: Վարժարաններու օտար բնիկը անհատապէս քննութիւն քացել է տնօրէնին այս անպատշաճ ընթացքին համար:

Աւելորդ է ըսել թէ պորթիսը դատաւարներուն տուած վճիռը ամէն կերպով գովելի է. նոյն իող աւելի խիստ դատապարտութիւն մը անպատեհ չպիտի ըլլար ուսուցչի մը նո մանաւանդ տնօրէնուսուցչի մը որ կ'եղբեւայ թէ «միսը քիզի ոտկարը խնձիղի ոտկարը պատուէրը չի հաներ մտքէն, վարժարանին մէջ գործածելով

պատիւ մը՝ որուն գէժ այնչափ գրուած է և որ այնչափ տնգամներ բողոքի առիթ տուած է մեր կրթական դրածին մէջ:

Հայելի. — Զարրանալի չէ՛ երբ այս տեսակ վարժարաններու համար պաշտպանողականներ կը գրուին վարժարան — վիքիլիսմադրի մը կողմէ, ըստ որում «նըմանը զնմանն սիրէ»:

Հոգաբարձութիւն հարկ կը համարի ծանուցանել թէ ի նպատակ քաղաքիս Ազգ. երկսեռ վարժարանաց 120 կտոր խնամով և նուրբ ծաշակաւ ֆրատրաստուած ձեռագործներ վիճակահանութեան գրած է, մէն մի տոմսի գին 1 ֆր. արժողութեամբ:

Լիւայոյս եմք որ արդոյ հայ հասարակութիւնը բազմաթիւ ազրատ և որբ մանուկներու կրթութեան գործը ապահովելու մեր այս ձեռնարկը պիտի հաջի քաջալերել, փութալով գնել վիճակահանութեան այդ տոմսերէն:

Ի գիմաց Հոգաբարձութեան

ԶՈՒԼԱՐԱՆ

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ

ՅԱԿՈԲ ԾԵՐՈՒՆԵԱՆԻ

Կը ձուլէ ամեն լեզուէ տապաքական տառեր, մասնաւորաբար Հայերէն և Թուրքերէն, Էսպան, Գաւաթ, Էնթերլիներ, Գիծ և Կարնիւթիւր:

Գինը յոյժ դիւրամատչելի: Հասցէ
AGOP DZÉROUNIAN SOPHIA (BULGARIE)

Отговорникъ Ж. ИВ. ЖЕКОВЪ
Печатница „Взаимность“ — Варна.



ՀԱՊԵՅԱՍՏԱՆԻ ՄԻԱԿՏՈՒՐ ԲԱՐԷ ԵԿԵՂԵՑՆԵՐԸ

Փարաւոններու երկրէն անդին Աշխարհի ամենահին քաղաքակրթութիւնը պահող եթովպական երկիրն է Հապէշաստանը: Հապէշները միակ քրիստոնեայ ազգն են ամբողջ Ափրիկէի բնիկ ցեղերուն մէջ: Եթէ իրենց աւանդութեանը հաստատնք, Հապէշաստանը ամենէն առաջ աւետարանուած երկիրներէն մէկն է: Է. դարուն Հռոմէն բաժնուած են անոնք եւ հիմնած են եկեղեցի մը բոլորովին անկախ թէ՛ Պապէն թէ՛ Պոսոյ յոյն տիեզերական Պատրիարքէն: Հապէշներու եկեղեցին Ղպտի եկեղեցիէն կախում ունի ու քահանայապետը՝ Ապրմա, կը նստի Կոնստանտնուպոլսէն եւ կը նշանակուի Ալեքսանդրիոյ Ղպտի Պատրիարքէն: Երկիրն մէջ պաշտօնի վրայ եղող բազմաթիւ կանոնաւոր եկեղեցականներէ զատ, կան նաեւ վանականներ եւ զանազան ձեւերու տակ կղերներ, որոնք մասնաւոր վանքերու մէջ չեն բնակիր, այլ իրենց պատկանած եկեղեցիներուն արտերը մշակելով կապրին: Հապէշաստան բազմաթիւ եկեղեցիներ ունի, գրեթէ ամէնքն ալ փայտաշէն. ընդհանրապէս բարձր տեղեր շինուած են, շրջանաւազեւ պատերով, կոնաձեւ տանիքով եւ շրջապատուած ծառերու անտառակով մը: Եկեղեցին միշտ երկու մասի կը բաժնուի, մէկը ժողովրդին համար, միւսը սր վարագոյրով բաժնուած է, սրբարան կամ խորանն է ուր քահանաները մրակ կրնան մտնել: Սակայն ամենէն հետաքրքրականը Հապէշաստանի միակտուր քաղաքէ եկեղեցիներն են: Պ. Ռաֆրէյի խօսքին նայելով—սր 1881ին պաշտօնով մը նէկիւս Յովհաննէսին ներկայացաւ—200է աւելի է այդ եկեղեցիներու թիւը: Նշանաւորագոյնները կը գտնուին Լասդա գաւառին Ս. Լալիպէլա քաղքին մէջ: Այս սուրբ քաղքին բնակիչները վանականներէ, քահանաներէ եւ անոնց ծառաներէն կը բաղկանան: Հոս կը գտնուի տասնըմէկ հատ միակտուր քարէ եկեղեցի: Հապէշները ուզելով հին Յուդայաստանի մայրաքաղաքին յիշատակները կենդանի պահել, այս եկեղեցիներուն տուած են երեսուցամի տասնըմէկ տաճարներու անունները: Այս տեղը խիստ նշանաւոր ուխտատեղի է:

Այս եկեղեցիներէն տասը հատը իրաւ ու քով

մէկ խումբ կը կաշխեն: Պիէք բաւը —սր Ամարեան լեզուն մէջ ճոռն կը նշանակէ, կը դարձած ուի նոյնպէս եկեղեցի ցուցնելու համար:

Աւասիկ ինչ կերպով փորած են այս Պիէթները Ապառաժէ ահագին լեռան մը վրայէն սըրբած են հողը. յետոյ վերէն վար ուղղակի ապառաժը ճեղքած եւ քառալուսի, կլու զանազան ձեւերով մեծ կտորներ թողուցած են, որոնք ընդհանրապէս չորս կողմէ բաց են, երբեմն մէկ կողմով լեռան յեցած: Յետոյ այս խոշոր ապառաժի կտորը սկսած են փորել ներսէն եւ շինած են յատակը իր նկարներով, ձեւերը իր կամարներով, սեղանը, եւ պատերուն մէջ փորած են խաչաձեւ լուսամուտներ: Հսկայ աշխատութեան եւ անսոհման համբերութեան մը արդիւնք: Մանաւանդ դիտելու է որ քարակոփին մուրճը (կռան, քիւլիւնկ) իրենց միակ գործիքը եղած է: Առաջին խումբին մէջ ամենէն կարեւորն է Պիէք—Մէսիմէ—Ալլէմ (Ս. փրկիչ աշխարհի եկեղեցի) եկեղեցին որ 33½ մէթր երկար, 23ու կէս մէթր լայն է, դուռէն 32 մայթր կը շրջապատեն շէնքը եւ զլիւսուոր ճակտին: շինուածքը քիչ մը կը յիշեցնէ յունական ոճը: Ամենաբարձր պատը 208 մէթր է: Ներսի կողմէն եկեղեցին ունի 5 հատ ժամխորան, 8 հատ վերնատուն, 28 հատ սիւն իրենց խոյակներովը, որոնք իրարու կապուած են Բիւզանդական կիսաբոլոր կամարներով: Պիէթ—Մարիամ նշանաւոր է իր պատերուն վրայ փորուած նկարներովը: Հոն կերեւի նաեւ տեսակ մը ճեմելիք ուր կըսուի թէ Լալիպէլա թագաւորը կը նստէր պաշտամունքին ներկայգտնուելու համար: Քաղաքը այս թագաւորին անունովը կոչուած է: Պիէթ—Կորչիլուսի (Ս. Գրիգորի եկեղ.) յատակագիծը շինուած է Բիւզանդական ճարտարապետական ոճով եւ կը ձևացնէ յունական խաչ մը: Լուսամուտները խիստ ինքնատիպ են եւ ունին այնպիսի շրջապատներ որ մշկիթներու պատուհանները կը յիշեցնեն: Այնպէս սր կարելի է եւթադրել թէ արաբական ազդեցութիւնը այս կողմեր չգոյլի եղած է:

Հիմա կարեւոր է գիտնալ թէ սր դարուն շինուած են այս հետաքրքրական եկեղեցիները: Ռմանք կը պնդեն թէ երգ դարուն, բայց ասելի հաւանական կերեւի է. քզ. դարուն: Արաբական եւ Բիւզանդական ոճին խառնուրդը այս վերջին կտորիքը կը հաստատեն: Աւանդութեան մը հա-

մաճայն 23 տարի պէտք եղած է այս եկեղեցի-
ները փորելու համար: Եթէ Հապէշներու աւան-
դութեան նայելով ընդունինք թէ Լալիպէլա թա-
գաւորը շինած է զանոնք, գոնէ կարելի չէ ըն-
դունիլ թէ այդ թաղաւորին օրով անոնք ամ-
բողջացած են:

ՌԵՎԻՒ ՏԻՒ ՏԷՕ ՄՕՆՏ

ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅԾԵՐ

ԿԵՂԾ ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Այս սրճակ սրճակ վարստեռն ծղիւնի
Շունչին տու եւ առ, շունչին քոցախառ
Հեկեկանքներուն խոր խոր արձագանք
Այնքուն եին հեգին անբարբառ:

Սիրակն եր գեղակ. արցունքի ջնակ
Ձոյգ մը աչքերով հոգիս մտկեց.
Սիրոյ փոքրիկն անծանօթ ու փակ
Այս սրճիս գրահ փշրեց ու փանդեց:

Սիրակն եր քոցակ. առտուան խօսնակ
Շաղկաւրտ քոյուն մ'եր, որ յունական
Յիցի փիցի ու, ախ սիրքս ծակ ծակ
Քանոց մը դարձուց չար Եւանդիսն:

Մինե՛՞՞՞՞ մ'եր սիրուն. մարմինը մարմար
Դոգ հրեշտակէն փոխ առած եր ան.
Քանի՛ ըղձայի շունչին շար ի շար,
Արցունքս ցանկէ մարգրտի նման:

Քանի՛ ըղձայի շունչ ու փոքրիկ
Պատահանէ շուրջ քոյի գիրկն ու փոյ
Ու երկար օրեր ծառաւ անօրի
Յագնեալ կուշ կուշ անոր գգունիքով:

Բոց մըն եր ինքը, ջահը տոխանքին
Ու ճգիկ ճգիկ սիրքս խորոպէր.
Քանի՛ ըղձայի գոնէ աչք կրակին,
Ըրալ ու խանձիկ սրճին աղբեր:

Գիշեր մ'ալ շանկարձ փայլերով դողոջ
Աչքերս սանուկ, շունչս հեկեկուն
Քողովեցալ հոն, ուր նորստորոջ
Նազնիս արդէն ննչեր խոր ի փուն:

Դնէլ կուգէի աղջին համարձակ
Դու ու շանքայից կայծերը անհուն
Ձոր արծարծեց յիս վաշտիկան կրակ
Յանձնին աչք չփնալ զէս Հեղեկունիւն:

Դեռ ո՛սք չը դրած ի դուռն եղեմին.
Խեւերս տարածած շուրթս քիզ մը քաց,
Օղբ տարախով ի՛նչ տալ համարտին
Սկսալ ընուլ... Վիսա է Աստուած:

Մէջ մըն ալ տեսնես չար աստի նման
Եկալ ցցունցալ մի անգործ տղի,
Եւ զիս գամեց հոն... Վաշտիկան շփոթման,
Ըսե՛ք կաղաւթ, ի՛նչ ընենք, աղէկ:

Փողոցի շանքան
Երկնից յունկան
Ինձի անհեման
Պաշտպաններ եղան.
Խեղճ մը հանելով
Կեղծեցի կարգալ,
Կարգալ ու շարժ
Տուն կերպարանալ:

ԱՊՐԻ—ՆԱՏԱՐԱ

Ծ Ի Ծ Ա Ղ

ԶՈՒԱՐՃԱՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵԶԱՅԱՆ ՀԱՅԵՐՈՅԹ ՄԸ

Ամերիկայի մէջ կը զբօսնուն: Էն նշանաւոր
բնագէտներն անգամ երբեմն հաճոյք կը զգան
իրենց բարեկամները հմայելով: Ահա թարմ
պատմութիւն մը: Ֆիլատէլֆիայի և ուրիշ քա-
ղաքներու մէջ քանի ուսուցիչներ, որոնց մէջ էր
նաեւ նշանաւոր ելեկարագէտ Մր. Էլի Թոմսըն,
իրենց բարեկամները ճաշի հրաւիրած էին, Լին-
նի (Մասաչուսէթս) հռչակաւոր մէկ ճաշարանին
մէջ: Սեզան կը նստին. էն առաջ տաք տաք ա-
պուր մը կուգայ: Բայց երկվայրկեան մը չան-
ցած, «ապուրդ սա՛ն կտրած է» կառարկեն հրա-
ւիրեալք: Եւ յիշաւ հաղիւ թէ արտասանուած
էին այս խօսքերը, և ահա ապուրդ սառնոյցի կը-
տորուանքներու փոխակերպուած էր: Կրնաք ե-
րեւալայել ճաշարանապետին ապշութիւնը:

Յետոյ կուգայ առաջին կերակուրը: Սպասա-
ւորները հաղիւ թէ կանակնին դարձուցած էին,
և ահա բոլորները կը սկսին հրաւիրեալներուն
կողմէ: «Կը ծաղրէ՞ք մեզ, կը դռնէն. բերած
ձուկերնուդ նայեցէք, փայտի կտոր մ'է կար-
ծես»: Եւ յիշաւ պատահաբաղը կաղնիի կտորի
մը պէս կարծրացած ձուկին կը զարնուէր: —
«Բայց, պարոններ, հիմա փուռէն դուրս հանե-

ցինք:—Ետ տարէք կերակուրնիդ, Երկրորդ կերակուրն եկաւ. սենեակէն ներս բերուելու պահուն կրակի պէս տաք, բայց սեղանին վրայ դըրուելուն պէս կը սառէին: Հացը կարծրացեր էր պողպատի նման, եւ երբ կը փորձէին կտրել, փշուր փշուր կըլլար: Գինին սասեր էր շիշերուն մէջ, եւ ջուրի գաւաթները շառաչածայն կը կոտրէին, ու մէջերէն դուրս կելլէին սառի թան. ձըր կտորներ: Շիշերը կը փոխուէին. բայց վայր կեան մը ետք փոքր ազմուկ մը կը լսուէր, եւ գինին խիցը մզելով շիշէն դուրս կելնէր վարդադոյն գլանի մը ձևով: Ա՛յն բան քար կը հտրէր վայրկենաբար:

Սպասաւորները սեղանապետը կանչեցին, եւ ան ալ ճաշարանին տէրը, որ բոլոր հրաւիրեալներուն երգունցաւ թէ իր բոլոր փութերը տաքութենէն կասկարմիր կտրած են, թէ սենեակին մէջ ջերմաչափը 18 տասնիճան կը ցուցնէ, եւ թէ այս ամենքը գեր բնական ըլլալու են: Հոսկի եղաւ ի նորոյ կերակուր պատրաստել:

Ամբողջ ամիս մը Լինն քաղաքի մէջ խօսուեցաւ այս եղանակն դէպքին վրայ, եւ վերջապէս օրին մէկը անպաղտնապահութեամբ մը շընորհիւ հանելուկին լուծումը գտնուեցաւ:

Մը. Թումսըն իր աշխատանոցէն բերեր էր Լոնաոնցի Մը. Տիւարի մեթոտով թանձրացած օգին սրուակ մը: Արդ այս օգը լուծուելով եւ կաղաչին ձև մառնելով զերոյէն 200 ատտիճան վար յըտուլիւն սուալ կը բերէ: Մը. Թումսըն՝ սպասաւորներու անուշադրութեան մէկ վայրկենին կերակուրներուն եւ յեղուկներու վրան քիչ մը թանձրացեալ օգ կը ցրուէր, եւ անմիջապէս միտերն եւ գինիները հիւսիսային բեւեռի բարեխառնութիւնը կը ստանային եւ սառ կը կտրէին ի մեծ ապշութիւն բոլոր ներկաներուն:

Երկրորդ ճաշին պահուն շատ խնդացին հանդիսականք, բայց 15 օր վերջ ճաշարանապետը խնդիրն հասկնալով պահանջեց երկու հացկերոյթի փոխարէն պահանջեց. բան մը զոր յօժաւալամ՝ ընդունեցան հանդիսականք: Կարծեր այնքան ճշգրտութիւն, այնչափ զուարճութեան փոխարէն:

Օրենսդէտ մը իր պաշտօնակիները ճաշի հրաւիրեց, երբ սեղանատուն իջան, ըսաւ հրաւիրեալներուն:

—Ար ցաւիմ սր ալար բաներ չունիմ ձեզի հըրամզները:

—Ինչպէ՞ս չէ, պատասխանեց զուարճախօս մը, գեղեցիկ կովոտ գլուխ մը ունիք:

Նշանաւոր Թալէրան օր մը երկու տնուանի տիկնանց մէջ նոտած էր, որոնցմէ մէկուն չափէն աւելի յարգանք կընծայէր. երբ միւսը ալ հարկադրուեցաւ հարցնել Թալէրանի թէ «Եթէ երկուքնիս ալ միասին ջուրը իյնանք, նախ որո՞ւ օգնութեան պիտի հասնիք»:

—Անշուշտ այս տիկնոջ, պատասխանեց մեծ քաղաքագէտը, որովհետեւ դուք այնպիսի հրեշտակ մըն էք, որ ոչ ջուրէն ոչ ալ կրակէն կը վախնար:

—Սեփոնիկ օղլում, քէօմիւրնիս հատաւ, քիչ մը բան առնելու է:

—Աղէկ կըսես ամա մայրիկ, քիւն 12 փարայէն վար չեն տար կող:

—Էյ Փայտա ունի՞ եալում, 12 փարայ է ըսելով քէօմիւրնի՞ պիտի մնանք, վաղը ձմեռը տահա կը սուղէ, ինչ պիտի վառենք:

—Իուն հոգ մի՛ բներ, մինչև ձմեռ քէօմիւրը չաժնայ նէ՛ Բաղաքականի խմբագիրներուն քչած մատրխները կը վառենք:

—Պաղաւնիցա՛, զարբուղարը գաչա վէրի-յօրսըն:

—Պէօյիւքէր իքի զրուշ. օ պիւլէրի ալթմըշ փարա:

—Ալթմըշըգլարտան իքի թանէ կէօնտէր էվէ. Փագաթ, էյի չըգմաղսա՛ կէրի կէօնտէրի-րիմ:

—Ս նասըլ սէօղ. ալտըղըն բիանքօ պիլէթինտէն պիր շէյ գաղանմայաճագ օլուրտան, կէրի՞ մի կէօնտէրիսին:

—Օնու սաթան՝ սաթտըղը նամէրօսընուն գաղանըպ գաղանմայաճաղընը պիլմէզ:

—Ըյ պէն պիլիւրմիլիմ գարբուղըն հանկըսը էյի հանկըսը ֆէնա օլաուլունու ալտըղըմ կիպի սաթարըմ:

—Հէլպէթտէ պիլիւրսին, չիւնքիւ զէնահաթըն տըր:

—Սանա պիր շէյ տէյլիմ մի. Մայտանոս աղա, էկէր պիլմիս օլտամ պիլէ, օ գատար տիվանէ տէյլիլիմ քի էյիսինի սանա վէրիպ ֆէնստընը պանա սաղլայըմ: